

գալիք սպա Մատթէոսեան վարդապետը մի ազգու քարոզ խօսեց ա. Աստուածածին եկեղեցում, որից յետոյ ինտելիգենտ տիկիները, օրիորդները և պարսններ մօտ վաճառեցին թէ՛ ա. Փրկիչը և թէ՛ Աստուածածին եկեղեցիները դռները մօտ և մօտ չըջեցրին եկեղեցիների մէջ: Նոյն երեկոյան երիտասարդները բաժանվելով հինգ խմբերի՝ «Աւետիս» ման եկան և հաւաքեցին մօտ 500 բուրջի: Մատթէոս վարդապետը յոյս ունի հաւաքել տեղիս քահանայներից և վիճակի գիւղերից էլ մ. 1000 բուրջի և այդ գումարը հետք առած այս օրերս կուղեւորվի Ախալքալաք: Բացի այս նուիրատու թիւերից մեր յաջորդի ձեռքով Ախալքալաք կուղարկվին նաև չորս մեծ հակ հագուստներ:

Ամսիս 4-ին, երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ վախճանվեց հարկային տեսուչ Գ. Ի. Բառէրը, որը իր մարդասէր վարմունքով գրուել էր ամենքից առ համարակարգ: Գ. Բառէրը, չը նայելով իր ստացած աչքի ընկնող ուժերին, մնում ազգաստ, և նրա թաղման ծախսերը կատարելու համար անհրաժեշտ եղաւ դիմել համազանգու թիւին: Այս պարագն էլ իր վրա վերցրեց մեր պարսնածանայ հասարակութիւնը: զիմեց համազանգու թիւին և հաւաքեց մօտ 400 բուրջի:

ՆԱՄՍԿ ԽՐԱՊԱՐԿՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, յունվարի 17-ին
Վերջապէս պ. Կարա-Մուրզան կրկին երկու կօնցերի ստեղծ բանկային թատրոնում, որոնք շատ հետաքրքիր և բազմակողմանի լուսնայաթիւն ունեն, բացի կօնցերատան բաժնից ներկայացրելով էին ժողովրդական կանաքեց անվան պատկերներ, համեմատ ազգային և սոցիալական քառաձայն երգերով, օրինակ «Ջրօրինների դիւրը» և «Հարսի վերջին հրաժեշտը հօր տանից»: Այդ պատկերները շատ լաւ տպագրութիւն էին թողնում ներկայ երգող հասարակութեան վրա. յաճախ բնւ էին հրաւիրում հեղինակին և շնորհակալութիւն յայտնում: Սօցիալիստ մէջ աչքի էր ընկնում օպերային արտիստ պ. Վարդիկեանը: Բացի թէև աչքալի ներկայացուցներ հայերէն լեզուով առաջին անգամն են լինում Թիֆլիսի բեմի վրա՝ հայ հասարակութիւնը փայլում էր իր բացակայութեամբ: Ողբով հայտն բնւ, մինչև երբ պէտք է մօտայեց ընկած մնաս...

Ամսիս 22-ին կրկին լինելու է կօնցերու, բնեթիւս Մ. Վարդիկեանի: Յոյս ունենք, որ հասարակութիւնը չի զլանայ վարձատրելու պ. Վարդիկեանին, որը համակրելով մեր ազգային և ժողովրդական քառաձայն երգերի տարածող պ. Կարա-Մուրզայի նպատակին՝ ամառվանց յանձն է առել մասնակցելու բոլոր կօնցերոսներին, որով և առանձին փայլ է ապրիս մշտական խմբին:

Այս կօնցերոսը լինելու է երեք բաժնից, երեք էլ զանազան պատկերներով: ա) «Էջմրածնի տօնը», պատկերը ներկայացնելու է Էջմրածնի վաթիւն, տօնի առաւօտ լուսաբացին: բ) «Ջրօրինների դիւրը», կը ներկայացնէ թիֆլիսի կանաքեց վերջում պատկեր—Մընդիան գիւղը ընթրիքի նստած: գ) «Մատուտ» օպերայից մի կտոր երաժշտ. Գուճոյ, թարգմ. Վարդիկեանի: Մատուտ կերպէ պ. Վարդիկեան ծանկալի էր, որ մեր հասարակութիւնը սերտով վերաբերվէր դէպի այն գործը, որով սիրտ և հոգի տուած էր լինելու երաժշտական պ. Կարա-Մուրզային, որը ամբողջովին նուիրված է այս օգուաւտ գործին: Հասարակութեան համակրանքը արկի ետակը կը տար պ. Կարա-Մուրզային, որ կուճնանար աւելի լաւ պատրաստած մշտական խումբ ու իր հեղինակած հայկական կանաքեց անվան օպերաները կը տեսնէինք բնւ դրած:

Ա. Չամբրեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսում ուսուցող միջնակարգ դպրոցները այս տարի զգալի կերպով թանկացել են. իսկ վերջին ժամանակներս մի քանակութիւնը պակասել է վաճառանոցում, որովհետև մորթիներ համար անասուններ չեն գալիս քաղաք: Քաղաքային վարչութիւնը խորհրդակցել է մասնագէտների հետ, բայց մինչև այժմ դեռ բաւարար լուծում չէ գտել վաճառանոցի դրութիւնը բարձրելու համար: Կարծիք կայ, որ եթէ քաղաքային վարչութիւնը ինքը բանջ մի խանութներ և ձեռք բերէ անասուններ, որովհետև և նրանց միջոց վաճառելու համար՝ այն ժամանակ կը թուլացնէ ներկայ գծուարութիւնների մեծագոյն պէտք:

Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը որոշել է ընդարձակել իր բերօք գործունեութիւնը առաջիկայ գարնան և ամառը: Սողովի աղբիւնը զանազան հիւանդութիւններից ազատվելու համար պատուիրված է մեծ քանակութեամբ ծծումբ և պղնձի ար-

ջապ: Ընկերութիւնը ձեռք է բերել զանազան տեսակ գիւղատնտեսական գործիքներ և վերջում է իր վրա յանձնարարութիւններ՝ բերելու գիւղատնտեսութեան վերաբերեալ ամեն տեսակ գործիքներ, սերմեր, ձեռնարկներ և ուրիշ առարկաներ:

Մեզ հայտնուած են, որ Կարաբաղում երեւացել է տուարի վրա ծանոթախա կարայեակի փորձնական կայարանի նախընթաց արդէն հիւանդացի և և ստուկի 12 դուռն անասուն:

Տապանօզի թիւրքական հիւպատոսը, ինչպէս հայտնուած է «Казбек» լրագրքը, իր կառավարութիւնից ստացել է մի հրաման, որով յայտնվում է, թէ Թիւրքիա ուղարկված հրաջանները այսուհետև կենթարկվին գրաւման մինչև անգամ այն դէպքում, եթէ նրանք ուղարկվին թիւրքական մարտաների միջոցով:

Մարաբաղաքի լրագրքները հայտնուած են, թէ Ֆինանսների մինիստրի ամենահպատակ գեներալ-մայոր համաձայն, անցեալ տարվայ գեներալների 31-ին կայացաւ Բարձրագոյն հրաման տարր տարով (սկսած 1900 թ.ի յունվարի 1-ից) յետաձգելու Նոր-Բայազետ գաւառի 73 գեներալների ընտելիչների պարտքը, որի գումարն է 42,918 ռ. 30 կ. և որ 1893, 1894 և 1895 թ.ականների ընթացքում փոխ էր տուած գեներալներին պաշարելէնի գումարից, այն պայմանով միայն, որ լծարը կատարվի հաւասար մասերով, առանց տոկոսի, իսկ ժամանակին չը վճարված գումարների վրա աւելանայ 6% տուգանք:

«Харьк. Губ. Вѣд.» հայտնուած է, թէ ներկայ տարվայ ընթացքում այն անձերից, որոնք կամենում են նաւթի առևտուր անել բացի սովորական վրայաթղթից, պէտք է պահանջվի նոյնպէս և մի այլ վրայաթուղթ՝ ոստիկանութիւնից այն մասին, թէ արդեօք առևտուր անողը բարոյապէս սրբան վստահելի անձնատուութիւն է:

Պետերբուրգի խոշոր գործարանատէրերից և արտադրողներից աւելի քան 100 հոգի միացել են իրար հետ՝ արտադրութիւնները կեղծելու դէմ մարտնչու համար: Այս միութեան անդամներից իւրաքանչիւրի պարտատուած պարտքը պէտք է կրէ կառավարութիւնից հաստատված դրօշմ, որպէս վրայութիւն այն բանի, թէ սպարանքը կեղծված չէ:

ԲԱԳՈՒՅԻՑ մեզ հայտնուած են, որ այնտեղ շուտով կը կայանայ սովորական երեկոյթ, որի հասոյթով ապահովվում է տեղական գրադարան-ընթերցարանը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՋՈՆ ԲՆՈՍԿԻՆ

Յունվարի 15-ին Լանկաշիրում վախճանվեց Ջոն Բոսկինը, XIX դարի ամենաշնամուտ գործերից մէկը, որ իր հայրերի Անգլիայում նոյնքան մեծ ժողովրդականութիւն էր վայելում, որքան այժմ Ռուսաստանում Լ. Տօլստօյի և իրաւի, Ջոն Բոսկինի և Լ. Տօլստօյի գաւառած գաղափարների և ձգտումների մէջ կան շատ կէտեր, որոնք յատուկ են երկու մեծ բարոյագէտներին և և Լ. Տօլստօյի նման Ջ. Բոսկին և և իր երիտասարդութեան ժամանակ բոլորովին հեռու էր այն գաղափարներից և բարոյական դաւանանքից, որոնց ջերմ քարոզիչը դարձաւ նա աւելի հասակաւոր ժամանակ:

Բոսկինի հայրը շուրջանդացի հարուստ գիւնեվաճառ էր: Լինելով ընտելեան սիրահար նա յաճախ ամբողջ ընամեկը մանապարհորդում էր ոչ միայն Անգլիայի և Շոտլանդիայի գեղատեսիլ վայրերում, այլ և Եւրոպական շրջանում և մանաւանդ ընտելեան սիրահարների կլասիքական երկրում—Շվեյցարիայում: Անշուշտ այս մանապարհորդութիւնների ժամանակ ստացած ապագորութիւններն էին, որոնք խոր և անջնջելի ազդեցութիւն գործելով մատուկ Բոսկինի վրա—ապագայում դարձրին նրան «գեղեցկութեան կրօնի» երկրպագու: Նրա առաջին գրութեանը—«Այժմեան նկարիչները», «Ճարտարապետութեան եօթը ճրագները», «Ճարտարապետութեան եօթը ճրագները», այնպիսի մեծ յղարկութիւն մտորին 40-ական թ.ականներում գեղարուեստի բոլոր ճիւղերում, որ կարելի է գեղարուեստի XIX-րդ դարի պատմութիւնը բաժանել երկու մասի—գեղար-

ուեստ մինչև Բոսկին և Բոսկինից յետոյ: Այն ինչ որ մտորին համարեա նոյն ժամանակ վրայագրութեան մէջ Բալզակի և Ֆլօբեր, այժմեան թէպէտ վրայագրութեան հայրերը, նոյն թէպէտ վրայագրութեան մտորեց Բոսկին գեղարուեստի ուրիշ ճիւղերում: Նրա հայեացքները գեղարուեստի վերաբերմամբ ընտրուած են համարեա նոյն խօսքերով, որոնցով բնորոշում է Ջօլա թէպէտական բօնանը, այն տարբերութեամբ միայն, որ Բոսկին աւելի եւս մեծ տեղ է պահանջում գեղարուեստի մէջ գաղափարական-բարոյական համար, քան Ջօլան վրայագրութեան մէջ:

Գեղարուեստի վերաբերմամբ Բոսկին քաղաքում էր իր գրութեանը, թէ նա—գեղարուեստը—պէտք է հիմնված լինի փաստերի մանրագին և համբերութեամբ կատարված ուսումնասիրութեան վրա: Ընտելեան համարապարհուն շրջանում: Գեղարուեստի նպատակն է ոչ թէ խաբել զգացմունքները, ոչ թէ նմանողութիւնը, այլ իսկութեան ձեւակերպում: Բացի դրանից նա բարոյական զգացմունքը համարում էր գեղարուեստի գնահատութեան կշռաչափը, այն հիմնաքարը, որի վրա միայն կանգնած ենարար էր դառնել իսկական և ճշմարիտ ճաշակի վրա ունենալի գաղափարների և նրա ազդեցիկների մասին:

Իր կեանքի մէջ, մանաւանդ նրա առաջին կիսում, Բոսկին մինչ այն աստիճանի գրութեանը գեղարուեստով և ընտելեան գեղեցկութիւնների անմիջական զիտողութեամբ, որ բոլորովին մտանում էր իրականութիւնը. նա չէր հետաքրքրվում մինչև անգամ իր հայրենի Անգլիայի քաղաքական կեանքով. նոյն իսկ իր ազգականների վիճակով: Բայց, ի հարկէ, եթէ նա մնալիս լինէր իր ամբողջ կեանքում լոկ ճաշակագէտ, նա երբէք չէր վստահի այն հուշակը, որ վստասելից լիտոյ սօցիալական գաւառան հարցերի վերաբերմամբ իր խորամիտ գրութեանը և իր հասարակական գործունեութեանը:

Իր կեանքի երկրորդ կիսում Բոսկին, ինչպէս խոստովանում է ինքը, չէր կարողանում այլ եւս հանդիստ սրտով և անընդուն խղճով դիտել ընտելեան գեղեցկութիւնները. Շվեյցարիայի լեռների հրաշալիքների մէջ նրան սկսում էր տանջել Անգլիայի դժբախտ բանուորի վիճակը. նա զգում էր, որ ընտելեան ոչ մի գեղեցկութիւն չէ կարող հեռացնել իրանից մարդկային թշուառութեան պատկերները, որոնք այնպիսի ակներեւ էին, որ անկարելի էր արհամարհել նրանց: Ընդհակառակը, իր կեանքի երկրորդ կիսում Բոսկինը համարեա ամբողջովին նուիրեց իրան սօցիալական հարցերի ուսումնասիրութեան և իր գաղափարների գործնական իրագործմանը: Գեղարուեստի բարոյականացուցիչ ազդեցութեան վրա աւելի մեծ գաղափար ունենալով, քան իսկապէս է, նա բաց արեց սկզբում մի դպրոց բանուորների համար և անձամբ նրանց նկարչութիւն էր սովորեցնում: Սակայն այդ գործունեութիւնը եւրասարութիւն չը տուց նրան: Նա իր 5 միլիոնի անձնական կարողութիւնը ծախսեց ամբողջապէս և այդ գումարով Անգլիայի գաւառան տեղերում ընդարձակ հողեր գնեց երկրադարձական գաղութներ հիմնելու համար: Եւ թէպէտ այդ գաղութները Անգլիայում, որպէս և արտօսական գաղութները Ռուսաստանում, ամբողջութիւն չունեցան, բայց և այնպէս նրա գործնական անաջող փորձերը չը վնասեցին նրա սօցիալական գաղափարների տարածմանը, որոնք Անգլիայում այժմ և ևս բազմաթիւ հետեւողներ ունեն:

Նրա անձնական հակումների և գաղափարների առանձնայատկութիւնը այն էր, որ նա այժմեան տեխնիկայի գաղափարներ համարում էր վնասակար մարդկութեան համար. նա ատում էր մեքենաները և մեքենայական արտադրութիւնները, աչխատում էր վերականգնել թէև, ի հարկէ, ապագային կերպով, սնանկագործութիւնը, խուսափում էր ամեն կերպ կրակաթուղիների մանապարհորդելուց և առհասարակ ամենատեսակ մեքենաներով օգտվելուց: Նա համարում էր, որ այժմեան տեխնիկան ոչ միայն վնասակար է, այլ և ամեն մի քայլում սղեղանցում է ընտելիւնը, իրում է նրանից նրա պարզ և անպաճճ ճրագը:

Իր կեանքի վերջին տարիներում Բոսկին սպորում էր կանխաշիւքում, իր կալուածքում, հեռու քաղաքային աղմուկից և ատկի մեքենաներից:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«New-York-Herald» լրագրի թղթակիցը պատմում է, թէ բօշրներից բոլոր կրիւնների մէջ

սպանված են 800 մարդուց ոչ աւելի: Հասարակութեանը բօշրների կէտը միայն գտնվում է պատերազմի դաշտում, որովհետև կառավարութիւնը աւելի չէ էլ պահանջել: Նրանց պատերազմական միջոցի պաշարն երեք տարի բաւական կը լինի: Բօշրները, բոլոր յաղթութիւնների ժամանակ, ունեցել են աւելի սակաւաթիւ գործ, քան յաղթելու անգլիայիները: Բօշրների պատերազմական ծրագրերը զուտ պաշտպանական է. նրանք հանդիման են, թէ կը կարողանան պաշտպանել իրանց անձնակազմը, որքան էլ մեծ լինի անգլիայիների թիւը: Երեք ամերիկացիներից երկուսը, որոնց հետ առիթ է ունեցել խօսելու թղթակիցը՝ համոզված են, թէ անգլիայիներն ամենաքիչը 300,000 զորք պիտի ունենան, որպէս զէ կարողանան աջգրութեամբ կապել բօշրների դէմ. իսկ երրորդ ամերիկացին համոզված է, թէ բօշրները յամենայն դէպս յաղթող կը հանդիսանան: Բոլորը միտքերուն վրայում էին, թէ բօշրներն անգլիայի գեղիւնները հետ մարդկային են վարվում:

Լօրդ Սալիսբուրիին և Բալֆօրը, նրանց հետ միտքին և գիտնաբանական կուսակցութեան պարագրիները, դիմել են իրանց կուսակցութիւններին մի շրջաբերականով և յրաւիրել են բոլորին անուշա ներկայ գտնվել յունվարի 30-ին պարլամենտի առաջին նիստին, որովհետև այդ նիստում վերին ստորձանի կարևոր հարցեր պէտք է քննել:

Մի անգլիացի կին, որի ամուսինը Տրանսվալի քաղաքային է գրված և այժմ պատերազմում է բօշրների հետ նրանք իր նախկին հայրենակիցներից դէմ, գրում է Իօնանիստրօզից. «Մեզ մօտ վաղուց այսպիսի առատ հունձ չէ եղել: Յոբնի անգլիայի պաշար ամբարված է պահեստներում: Մեզ համար ծիծաղելի են բոլորովին այն լուրերը, որ իրը թէ Տրանսվալի սով է սպանում:

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍՅՑ ԳՈՐԾԱԿԱՎՈՒԹԵԱՆ

18 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. «Правит. Вѣст.» հրատարակված է հետեւեալը. «Ռուսաց կայսերական կառավարութիւնը, պարսից շահի կառավարութեան միջնորդութեան համաձայն և հին ժամանակներից ի վեր նրանց մէջ կցած բարեկամութեան և համաձայնութեան շնորհիւ, թիոյ տուեց Պարսկաստանի փոխտուրանին գնել պարսից կառավարութեան 22½ միլիոնի փոխտուրանը «1900 թուականի սկզբնական 5%» ոսկեայ փոխտուրանը անուշտէ Այս թիւոսութեան զորութեանը Պարսկաստանի փոխտուրանի վարչութիւնը շահի կառավարութեան լիազօր ներկայացուցիչ հետ պայման կապեց վերոյիշեալ փոխտուրանի վերաբերմամբ: Պայմանագրով մէջ վերջում են հետակ կէտերը.—«1900 թուականի սկզբնական 5%» ոսկեայ փոխտուրանին չի վուցումը և տոկոսների վճարումը ընթացքս 75 տարուայ ապահովված են պարսկական բոլոր մարքային արդիւնքներով, բացի Պարսի և Պարսից ծոցի նաւահանգիստների մարքային արդիւնքներից: Յիշված արդիւնքներն այժմ նշանաւոր չափով գերազանցում են փոխտուրանի վերաբերեալ վճարների քանակութիւնից: Այնու ամենայնիւ, եթէ որեւէ պատճառով փոխտուրանի վճարներն ուշացվին, այդ դէպքում Պարսկաստանի փոխտուրանին իրաւունք է արվում կօտարով ինքնակալ պարսկական այն մարքաները, որոնց արդիւնքներով ապահովված է փոխտուրանը: Պարսկական կառավարութիւնը պարտաւորվեց նոր փոխտուրանի շիջեցնել իր արտաքին պարտքերն և առանց փոխտուրանի համաձայնութեան այսուհետև ոչ մի արտաքին փոխտուրան չանել մինչև 5% ոսկեայ փոխտուրանին չի վուցումը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Յունվարի 17-ին Էրմիտաժում, այս ձևովայ ընթացքում, Նոյս Մեծութիւնների ներկայութեամբ առաջին անգամ տեղի ունեցաւ թատրոնական ներկայացում, որին ներկայ լինելու հրաւիրված էին 300 հիւրեր:

ԿՈՆԴՈՆ. Լօրդ Էդմոնդ Ֆիլչմօրին ընդդիմադիր կուսակցութեան կողմից համայնքների ժողովում կառավարիչ ուղղել դրանքան ճակի պատասխան-ուղեղը և քաւակցութիւն յայտնել, որ կառավարութիւնը Հարտալայն Աֆրիկայի գործերում և պատերազմի նախադասարարութիւններում սկսած 1895 թից, ցոյց չը տուեց բաւականաչափ նախատեսութիւն, խոչնդութիւն և գործերի կարևոր ծանօթութիւն Այդ առաջարկութեանը հերքական առաջնութիւն կը արվի:

ԿՈՂԻՐԷ. Մայիս Պիլը հետադրում է Ջեքեյկայից, որ գտնվում է Սպլոսակ Նեղոսի վրա, թէ Ջեքեյկայի հարաւային կողմում նա հանդիպեց մի հետախուզող զորաբանի, որ

